

## Վերապատրաստող կազմակերպություն՝

ՀՀ Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարան

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում

### Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Տեքստային վարժությունների ինքնուղղումը աշակերտների կողմից ավագ դպրոցում՝ միջմշակութային հաղորդակցության համատեքստում

Աշխատանքի ղեկավար՝ Լիանա Սաֆարյան

Ուսուցիչ՝ Նոնա Կարապետյան

Դպրոց՝ Արմավիրի մարզի Ջրառատի Թ. Խաչատրյանի անվան  
միջնակարգ դպրոց ՊՈԱԿ

## Բովանդակություն

Ներածություն	3
1. Օտար լեզուն որպես միջմշակութային հաղորդակցման կարևոր բաղադրամաս	5
2. Տեքստային վարժությունների օրինակներ	12
Եզրակացություն	16
Օգտագործված գրականության ցանկ	17

## Ներածություն

**Թեմայի արդիականությունը:** Թեման արդիական է, քանի որ միջմշակութային հաղորդակցման հմտությունների զարգացումն գերմաներենի դասընթացում ենթադրում է կիրառել համալիր մոտեցում՝ հաշվի առնել ժամանակակից մեթոդական ուղղվածության գիտությունների և առարկաների զարգացման արդի միտումները, ինչպես նաև միջմշակութային հաղորդակցության առանձնահատկությունները, ՀՀ-ի կրթական իրողությունները: Հետազոտության հիմնախնդիրն արդիական է դառնում տարբեր կրթական ավանդույթների տարբերությունների հաղթահարման, զարգացած երկրներում գոյություն ունեցող առաջավոր փորձի ներդրման, ժամանակակից կրթության պահանջներին համահունչ օտար լեզուների ուսուցիչների որակավորման բարձրացման ռազմավարության, դինամիկ կադապարի մշակման և ներդրման անհրաժեշտությամբ:

**Թեմայի նպատակը և խնդիրները:** Մեր հետազոտության նպատակն է ներկայացնել միջմշակութային հաղորդակցության համատեքստում տեքստային վարժությունների ինքնուղղումը աշակերտների կողմից ավագ դպրոցում

Նշված նպատակներից բխում են հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել ուսուցմանը վերաբերող լեզվաբանական, լեզվամշակութաբանական և մեթոդական գրականություն,
- բացահայտել տեքստային վարժությունների ինքնուղղման առանձնահատկությունները հաղորդակցական և միջմշակութային հաղորդակցման հմտությունների զարգացման տեսանկյունից:

**Հետազոտության առարկան** միջմշակութային հաղորդակցման հմտությունների զարգացումն է գերմաներեն լեզվի ուսուցման գործընթացում:

Առաջադրված խնդիրների լուծման համար օգտագործվել են հետևյալ **մեթոդները**՝ հետազոտության թեմային վերաբերող մանկավարժական, լեզվադիդակտիկական, մեթոդական գրականության ընտրություն, ուսումնասիրություն և վերլուծություն, դիտում, թեստավորում, վերլուծություն:

**Աշխատանքը բաղկացած է** տեսական և գործնական հատվածներից: Տեսական հատվածում առաջադրվում են միջմշակութային կոմպետենցիաների զարգացման

մոտեցումները գերմաներենի դասերին, իսկ գործնական հատվածում դիտարկվում են վարժություններ, առաջադրանքներ, որոնք կարող են նպաստել միջմշակութային հաղորդակցության զարգացմանը:

## 1. Օտար լեզուն որպես միջմշակութային հաղորդակցման կարևոր բաղադրամաս

Միջմշակութային հաղորդակցությունը գործալ շփման ձև է: Այն ուսումնասիրում և նկարագրում է խնդիրներ, որոնք կարող են առաջանալ տարբեր դավանանքի, գիտելիքների, սոցիալական կարգավիճակի և էթնիկ խմբի պատկանող անհատների համատեղ աշխատանքի ընթացքում: Այս տեսանկյունից ուսմունքի հիմնական նպատակն է հասկանալ, թե ինչպես են տարբեր երկրների և մշակույթների պատկանող մարդիկ գործում, շփվում և ընկալում աշխարհը: Արտասահմանցիների հետ շփում ունեցող մարդիկ պնդում են, որ մշակույթը բացահայտում է հաղորդակցության կողավորման, այն փոխանցելու և մեկնաբանելու ձևերը: Որպես առանձին հասկացություն՝ այն ուսումնասիրում է տարբեր մտածելակերպի տեր անձաց շփման դեպքերը: Վերջինս ներառում է միմյանց լեզվի, մշակույթի, սովորույթների ընկալումը: Միջմշակութային հաղորդակցությունը իր տեղն է գտել այնպիսի սոցիալական գիտություններում, ինչպիսիք են մարդաբանությունը, մշակութային ուսումնասիրությունները, լեզվաբանությունը, հոգեբանությունը և հաղորդակցական հմտությունները: Միջմշակութային հաղորդակցությունը կարող է հանդիսանալ միջմշակութային բիզնեսի հիմք:

«Միջմշակութային հաղորդակցման ուսուցման զարգացումը առաջին հերթին կապված է այնպիսի նոր գործընթացների հետ, որոնք բնութագրում են սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ուղղությունները: Որպես մարդկային կյանքի ինտերնացիոնալացման հետևանք, դրանք արդյունավետ զարգացող գաղթային գործընթացներ են. աշխատավոր ուժի և զանազան էթնիկական խմբերի բազմաթիվ ներկայացուցիչներ խառնվում են իրար հետ և տեղափոխվելով նոր երկրներ, ձգտում են իրենց համար հարմարավետ և ծանոթ միջավայր ստեղծել»<sup>1</sup>:

Լեզուն մշակույթի կարևորագույն կատեգորիա է: Լեզվի գործառույթը տեղեկատվության պահպանումն ու հաղորդումն է: Լեզվի միջոցով անհատը հասկանում և ընկալում է շրջապատող աշխարհը: Անհատի համար լեզուն հզոր զենք է: Լեզուն, հաղորդակցման միջոց լինելով, կարող է տարբեր երկրների մարդկանց

<sup>1</sup> Т. Грушевицкая, В. Попков, А. Сааохин, Основы межкультурной коммуникации: учебник для вузов, М., 2002, էջ 207

միջև փոխըմբռնման անհաղթահարելի խոչընդոտներ առաջացնի որոնք հաղթահարելու համար անհրաժեշտ է փոխել մոտեցումն օտար լեզուների ուսուցման նկատմամբ<sup>2</sup>:

Այսօր հաճախ են գործածվում «միջմշակութային դաստիարակում», «միջմշակութային հաղորդակցում և ուսուցում» բառակապակցությունները: Ութսունական թվականներին մանկավարժական գիտությունը առաջ է քաշել «միջմշակութային ուսուցում» գաղափարը: Կարելի է առանձնացնել միջմշակութային կրթության սկզբունքներից մեկը՝ հարգանք ոչ միայն օտար լեզվի նկատմամբ, այլ նաև տվյալ լեզուն կրողի արժեքային համակարգի նկատմամբ: Այսօր մանկավարժը ո՛չ լեզվի «ինժեներ» և ո՛չ էլ լեզվի «մարզիչ» է. նա միջնորդ է մշակույթների միջև: Անհրաժեշտ է օտար մշակույթի և այն կրողների նկատմամբ օբյեկտիվ վերաբերմունք և համբերություն ցուցաբերելի ընդունել օտար մշակույթն այնպես, ինչպես կա: Շատ կարևոր է խոսքի դերը, այն ցույց է տալիս, թե անհատն ինչպես է ապրում, շփվում և աշխատում հասարակության մեջ, ինչպես է նա հաղորդակցվում օտարների հետ: Անհրաժեշտ է հարգալից և գրագետ խոսել սովորել քանի որ խոսքն արտացոլում է մարդու մտածելակերպը, հոգեկերտվածքը և կրթվածության մակարդակը:

Նոր ժամանակը և նոր պայմանները օտար լեզվի դասավանդման կոնկրետ մեթոդների փոփոխություններ են պահանջում: Քաղաքական, տնտեսական, մշակութային փոփոխությունները, տարբեր ազգերի և լեզուների մարդկանց ակտիվ տեղաշարժը օտար լեզվի ուսուցման տեսության և պրակտիկայի մեջ ձևավորում են նոր պահանջմունքներ: Է. Սեպիրի խոսքերով, «յուրաքանչյուր մշակութային համակարգ և հասարակական վարքի յուրաքանչյուր առանձին ակտ բացահայտ կամ թաքնված ենթադրում է հաղորդակցում»<sup>3</sup>:

Դժվար խնդիր է սովորել հաղորդակցվել, հասկանալ և խոսել: «Բացի լեզվի իմացությունից, հաղորդակցման արդյունավետությունը կախված է բազմաթիվ հանգամանքներից, հաղորդակցման պայմաններից և մշակույթից, վարքաձևի

<sup>2</sup> Т. Грушевицкая, В. Попков, А. Сааохин, Основы межкультурной коммуникации: учебник для вузов, М., 2002, էջ 207

<sup>3</sup> Сепир Э., Коммуникация//Избранные труды по языкознанию и культурологии. М., Прогресс, 1993, էջ 211

օրենքներից, արտահայտման ոչ խոսքային ձևերի իմացությունից (դիմախառ, ժեստերի համակարգ) և այլն»<sup>4</sup>:

Մարդկանց հետ հաղորդակցվելու և օտար լեզվով խոսել սովորելու համար անհրաժեշտ է տեղեկություններ ունենալ զրուցակցի սոցիալական և մշակութային կյանքի, նրա ապրելակերպի և հոգեկերտվածքի մասին, որովհետև «լեզուն գոյություն չունի մշակույթից դուրս, այսինքն՝ մեր ապրելակերպը բնութագրող գործնական հմտությունների և մտքերի սոցիալական ամբողջությունից դուրս»<sup>5</sup>:

Նկատի ունենալով, որ օտար լեզուն օգտագործվում է որպես միջազգային հաղորդակցման միջոց, լեզվի ուսուցման ընթացքում անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել միջմշակութային տարբերություններին: Ուստի լեզվական նյութի ներմուծումը պետք է իրագործել մշակութային և երկրագիտական տեղեկությունների հետ մեկտեղ:

Այդ իսկ պատճառով 10-րդ, 11-րդ և 12-րդ դասարանների դասագրքերը հիմնված են միջմշակութային կադապարի վրա: Անկասկած, աշակերտին ոչ միայն անհրաժեշտ է ծանոթացնել ուսումնասիրվող լեզվի ու մշակույթի հետ, այլև համեմատել այն մայրենի մշակույթի հետ՝ ուղղելով աշակերտի ուշադրությունը նրանց միջև եղած տարբերություններին և նպաստելով դրանց ընկալմանը:

Մշակութային զանազանության բացահայտումը հնարավորություն է տալիս մի կողմից՝ զարգացնել աշակերտի հանդուրժողական և հարգալից վերաբերմունքը օտարալեզու մշակույթի նկատմամբ, մյուս կողմից՝ օգնել նրան ըմբռնելու ազգային մշակույթի յուրահատկությունը և ճիշտ գնահատելու նրա դերը:

Կարելի է ասել, որ միջմշակութային հաղորդակցման միջնորդների պատրաստումը սկսվում է ավագ դպրոցում: Ավագ դպրոցում օտար լեզուների դասավանդումը նպատակաուղղված է սովորողի բանավոր և գրավոր հաղորդակցմանը, միջմշակութային փոխըմբռնմանը, այլ մշակույթների ու արժեքների ընկալմանն ու գնահատմանը, ոչ հայախոս անձանց հետ շփվելու, այլ երկրների ու ժողովուրդների քաղաքակրթությանն ու մշակույթին հաղորդակցվելու,

<sup>4</sup> Тер-Минасова, С. М. Язык и межкультурная коммуникация:(учебное пособие). Слово, 2008, էջ 28

<sup>5</sup> Сепир Э., Коммуникация//Избранные труды по языкознанию и культурологии. М., Прогресс, 1993, էջ 185

դրանց լավագույն արժեքները յուրացնելու և հայերենով արտահայտելու, ինչպես նաև հայալեզու մշակույթը այլ ժողովուրդներին մատչելի դարձնելուն:

Ավագ դպրոցում հաղորդակցական իրազեկության զարգացումը սովորաբար իրականացվում է 4 ուղղություններով՝ լսելով հասկանալը, խոսելը, կարդալով հասկանալը և գրելը:

Ավագ դպրոցում օտարի լեզվի դասավանդման նպատակներն են.

- դաստիարակել Հայաստանի Հանրապետության լիարժեք քաղաքացի.
- զարգացնել գիտակից վերաբերմունք լեզվի հանդեպ՝ որպես մշակութային արժեք ունեցող երևույթի.
- զարգացնել տրամաբանական և քննադատական մտածողություն.
- կատարելագործել խոսքամտածողական գործունեությունը և հաղորդակցական հմտությունները, որոնք ապահովում են լեզվի ակտիվ տիրապետումը և օգտագործումը կյանքի տարբեր ոլորտներում և իրավիճակներում.
- ապահովել օտար լեզվի խոսքային էթիկետի առանձնահատկությունների տիրապետումը.
- խորացնել տեքստի հետ աշխատելու՝ փաստերը ճանաչելու, վերլուծելու, գուգադրելու, դասակարգելու ունակությունները.
- զարգացնել տարբեր ոճական ուղղվածություն ունեցող տեքստերի ընկալման ունակությունը.
- խորացնել ընթերցելու և ունկնդրման, տեքստի (հիմնկանում մենախոսական) բովանդակությունը ընկալելու և վերարտադրելու, որոշակի թեմայով գրույց վարելու և սեփական կարծիքը արտահայտելու ունակությունները:

Օտար լեզվի դասավանդումը ավագ դպրոցում իրականացնում է գործունեական, հաղորդակցական, ճանաչողական, հասարակական, մշակութային և անհատական մոտեցումները, ինչը հնարավորություն է տալիս աշակերտներին ձեռք բերել անձի հասարակական հարմարեցման և համաշխարհային մշակույթին հաղորդակից դառնալու համար անհրաժեշտ գիտելիքներ ու զարգացնել անհրաժեշտ հմտություններ և ունակություններ:

Ավագ դպրոցի գերմաներենի դասագրքերի հիմքում ընկած են ինտեգրման, շերտավորման, հաղորդակցական ուղղվածության և ստեղծագործական



ունակությունների զարգացման սկզբունքները: Դասագրքերում փորձ է արված իրականացնել գերմաներենի կապը ինչպես հումանիտար, այնպես էլ բնագիտական առարկաների հետ: Նման մոտեցումը ապահովում է ինտեգրման սկզբունքի իրականացումը տարբեր ոճական ուղղվածություն ունեցող տեքստերում նրանց վերլուծության և մեկնաբանման ընթացքում, դաս-երկխոսություններում, դաս-քննարկումներում և այլն: Ավագ դպրոցում վերոհիշյալ սկզբունքների իրականացումը ապահովելու համար անհրաժեշտ է կիրառել ուսուցման համապատասխան մեթոդներ:

Ավագ դպրոցում օտար լեզվի ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու և միջմշակութային հաղորդակցման հմտությունները զարգացնելու համար կարելի է առաջարկել հետևյալը.

- Դասի ընթացքում դասավանդող-սովորող, սովորող-սովորող իրավիճակային երկխոսությունների ստեղծում, իմաստի որոնում. (իմաստը չի տրվում պատրաստի ձևավորված վիճակում: Դրան աշակերտը հասնում է որոնելով, կշռադատելով):

-Սովորողներն իրենք են եզրահանգում անում, դասավանդողը տալիս է առաջնային գաղափարներ, որից հետո կազմակերպվում են քննարկումներ:

-Հաշվի է առնվում սովորողի կարծիքը:

-Լեզվամտածողության զարգացումը կազմակերպելու համար դասավանդողն աշխատում է համագործակցային և խմբային հետազոտական մեթոդով:

-Ուսումնական աշխատանքի կազմակերպումը պետք է նպատակաուղղված լինի ուսումնառության դրական դրդապատճառների ձևավորմանը:

-Բազմագործառնության իրականացում. Օտար լեզվի ուսուցումը իրականացվում է այնպես, որ դա լինի և՛ որպես ուսուցման նպատակ, և՛ որպես միջոց՝ գիտելիքների տարբեր բնագավառներից տեղեկություններ քաղելու:

-Միջառարկայական ինտեգրում:

Թարգմանությունը, մարդու ամենաբարդ և աշխատատար լեզվական գործունեություններից մեկը, բավականին հազվադեպ է ներկայացված դպրոցական դասագրքերում որպես առանձին «Թարգմանել հայերենից գերմաներեն» առաջադրանք:

Այնուամենայնիվ, հեղինակները ավագ դպրոցի դասագրքերում որոշ դեպքերում ընգրկել են նման առաջադրանք՝ հաշվի առնելով հետևյալը.

- լեզվական միջնորդությունը կարևորագույն լեզվական գործունեություն է դարձել միջմշակութային շփումների ընդլայնման և խորացման հետևանքով,

- խոսքային գործունեության տարատեսակ ձևերի ուսուցումը բարենպաստ հիմք է ստեղծում լեզվական միջնորդության ձևավորման համար,

- թարգմանությունը ավագ դպրոցի դասագրքերում օգտագործվում է բառային և քերականական նյութը ներմուծելու, ամրացնելու և նյութի յուրացումը ստուգելու համար:

Աշակերտները պետք է գիտակցեն, որ թարգմանության ժամանակ կարևոր է ոչ թե բառացի վերարտադրումը, այլ բովանդակային, գործառական, կառուցվածքային և զգայականոճական համարժեքությունը: Նման խնդիրը զգալի դժվարություններ է ներկայացնում, քանի որ.

- տարբեր լեզուներում տարբեր են ինչպես բառային կազմը և քերականական կաղապարները, այնպես էլ նախադասության կառուցվածքը,

- լեզվական միավորները գործում են խոշոր խոսքային միավորների սահմաններում, ինչից կախված է լեզվական միավորների իմաստը և ընտրությունը,

- տարբեր լեզվական միավորները իրականացվում են տարբեր համատեքստերում, հետևաբար լեզվական միավորների ճիշտ ընտրության համար անհրաժեշտ է իմանալ և հաշվի առնել դրանց օգտագործման հնարավոր համատեքստերը երկու լեզուներում:

Ավագ դպրոցի դասագրքերում զգալի տեղ են գրավում աշակերտների տեղեկատվական մշակույթի ձևավորմանը ուղղված վարժությունները, ներառված են առաջադրանքներ, որոնց կատարման համար անհրաժեշտ է օգտագործել տարբեր տիպի բառարաններ /երկլեզվյան, բացատրական, հոմանիշների և այլն/, հանրագիտարաններ, ինչպես նաև նյութեր մամուլից և համացանցից:

Ավագ դպրոցում շարունակվում է աշակերտների ինքնուրույն տրամաբանական մտածողության զարգացմանը ուղղված անհատական բնույթ կրող աշխատանքը, որի արդյունքում աշակերտները ձևավորում են իրենց սեփական գաղափարները, գնահատականները և համոզմունքները:

Քանի որ քննադատական մտածողությունը հասարակական բնույթ է կրում, դրա ձևավորման և զարգացման համար ցանկալի է կիրառել աշխատանքի զույգային, խմբային և կոլեկտիվ ձևերը, ինչին կնպաստեն դասագրքերում զետեղված և ինքնուրույն տրամաբանական և քննադատական մտածողության զարգացմանը ուղղված բազմաթիվ առաջադրանքները՝ այդ թվում նաև տեքստային վարժությունների ինքնուղղում:

## 2. Տեքստային վարժությունների օրինակներ

Դպրոցում գերմաներենի դասավանդման փորձը ցույց տվեց, որ գերմաներենի դասերին միջմշակութային կոմպետենցիաների զարգացման համար կիրառում են բազմաբնույթ վարժություններ: Հատկապես առանձնանում են տեքստային վարժությունների ինքնուղմանը առնչվող տարբեր առաջադրանքները:

Դիտարկենք մի շարք առաջադրանքների տեսակներ:

### 1. Faktische Landeskunde

Lesen Sie bitte den folgenden Text, und beantworten Sie dann die Fragen.

Wie die Studenten essen?

In der Umgebung der Universitäten gibt es meist preiswerte Restaurants. Am billigsten ist aber die Mensa. Mensa heißt auf Lateinisch „Tisch“, und ist ein Restaurant für Studenten.

Es gibt dort meist zwei oder drei verschiedene Menüs; ein Stammessen für etwa zwei Euro und ein oder zwei teurere Menüs.

Das Essen ist nicht nur preiswert, sondern man ist auch schnell damit fertig. Man gibt eine Essenmarke ab, nimmt ein Plastiktablett mit dem Essen und sucht sich einen Platz an einem Tisch. Anschließend bringt jeder sein leeres Tablett weg. So schaffen viele Studenten Das Essen in einer Viertelstunde. Wer etwas mehr Zeit hat, geht noch in die Studentencafeteria und trinkt einen Kaffee.

- a. Was erfahren Sie?
- b. Ist das Ihrer Meinung nach ein landeskundliches Thema?

### 2. Kommunikative Landeskunde

Sehen Sie sich zunächst das Bild an ; Wo spielt die Szene?

Lesen Sie den Dialog.

A. Wir möchten gern bestellen.

B. Bitte , was bekommen Sie?

A. Ich nehme eine Gemüsesuppe und einen Schweinebraten .

B .Und was möchten Sie trinken?

A .Ein Glass Weißwein, bitte.

B .Und Sie? Was bekommen Sie?

A .Ein Rindersteak , bitte. Aber keine Pommes Frites ich möchte lieber Bratkartoffeln. Geht es?

B .Ja, natürlich!Und was möchten Sie trinken?

A .Einen Apfelsaft, bitte.

a)Bestätigt der Text Ihre Vermutungen über die abgebildete Situation?

b)Was erfahren Sie über das?Was erfahren Sie über dashalten der Personen?

1)Stellen Sie sich einen Restaurantbesuch in Ihrem Land vor.

2)Gibt es Unterschiede zu der Szene in Beispiel 2? Welche ?

3)Tragen Sie Ihre Beobachtungen in das folgende Schema ein.

	Im Text	In Ihrem Land
Abzahl der Personen		
Bestellung		
Anlaß?		

1)Unterschiede zwischen einem Restaurantbesuch in Ihrem Heimatland und der Siuation der Text.


Եթե ուշադրություն դարձնենք նշած առաջադրանքների բնույթին, կտեսնենք, որ դրանք հիմնականում նպատակաուղղված են տեքստերի միջոցով բանավոր խոսքի զարգացմանը, միջմշակութային հաղորդակցական ունակությունների ձևավորմանը: Առաջարկում ենք գերմաներենի ուսուցիչներին միջմշակութային կոմպետենցիաների զարգացման ժամանակ կիրառել հետևյալ քայլերը:

Նախաունկնդրում -Աշակերտին առավել հեշտորեն կողմնորոշելու համար նրան նախօրոք պետք է ծանոթացնել, թե ըստ ուսումնական ծրագրի, իբրև վերջնական նպատակ, նա ինչպիսի՞ խոսք պետք է կարողանա ունկնդրել-հասկանալ՝ առօրյա խոսք, նորությունների հաղորդումներ, զրույց, ելույթ և այլն: Աշակերտին պետք է բացատրել, որ բանավոր խոսքի ընկալումը ոչ թե օժանդակ, երկրորդական հմտություն է, որին կարելի է հասնել երբեմն-երբեմն մի քիչ ժամանակ տրամադրելով, այլ մի հիմնարար հմտություն, որին տիրապետելը աշխատատար և ժամանակատար գործ է և պահանջում է ժամանակ և համբերություն: Միջավայրից դուրս օտար լեզու սովորելիս բանավոր խոսքի ըմբռնման հմտությունների մշակումը ջանք և կենտրոնացում է պահանջում: Աստիճանական, քայլ առ քայլ աշխատանքով հնարավոր է հաղթահարել հնչող նյութի ընկալման հանդեպ ուսանողի սկզբնապես կուտակած վախը կամ հուսահատությունը: Ուստի աշխատանքները ծրագրելիս անհրաժեշտ է առաջնորդվել այն դրույթով, որ ունկնդրվող նյութի մակարդակը պետք է համապատասխանի աշակերտի հենքային գիտելիքներին:

1. ՈՒՆԿՆԴՐՈՒՄ. Այս փուլում ունկնդրելուն՝ որպես օտար լեզվի յուրացման գլխավոր ուղու, առաջնային նշանակություն է տրվում: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի բառային շղթայի հնչյունները, բառերը, պարզ նախադասությունները ունկնդրելով հասկանալուն, քանի որ հասկանալու կարողությունն ու ճշգրիտ արտաբերումը զարգացնելու համար անհրաժեշտ է ուշադրությունը կենտրոնացնել օտար լեզվին բնորոշ հնչեղության վրա, ինչը հաջող փոխներգործության հիմք է: Տեքստերն առատորեն պետք է ուղեկցվեն տեսողական նյութով (պատկերներ, առարկաներ, նկարներ, լուսանկարներ և այլն) և հնչյունային

ցուցանիշներով (աղմուկ, հստակ արտահայտված հնչերանգ և այլն), որոնց վրա հենվելով՝ աշակերտն ավելի հեշտ կընկալի տեքստը: Տեքստերը չպետք է ծանրաբեռնված լինեն անձանոթ բառապաշարով ու քերականական կառուցվածքներով:

Հատված առ հատված ունկնդրումը ուշադրությունը կենտրոնացնում է հնչող խոսքի առանձին պահերի վրա: Կարող է, օրինակ, հանձնարարվել. ա) հասկանալ որոշակի մեկ կամ մի քանի բառեր, բ) առանձնացնել չափ ու քանակին վերաբերող կոնկրետ տեղեկատվություն, գ) գտնել այս կամ այն հարցի պատասխանը, դ) կարողանալ լսածի հետ համադրել թղթի վրա գրված տեղեկատվությունը, ե) լսածի վրա հիմնվելով՝ լուծել կոնկրետ մի խնդիր, օրինակ՝ ընտրել ճիշտ ուղղությունը, նյութերը խառնել ճիշտ չափաբաժիններով և այլն, զ) լսածի հիման վրա դերախաղ կազմակերպել, որը կարող է լինել խմբային աշխատանք և այլն: Կրկին յուրաքանչյուր դասավանդող կարող է հնարել կամ կիրառել առաջադրանքի իր ուրույն տեսակները՝ ուղղված կետային տեղեկատվության ընկալմանն ու ստուգմանը:

Կարելի է առաջադրանքներ հանձնարարել նաև խոսվածքի ոճի, տոնի, ձայնի ծավալի վերաբերյալ՝ հարցերին պատասխանելու, հակիրճ նկարագրության կամ քննարկումների տեսքով: Առաջադրանքներն ընտրելիս միշտ պետք է առաջնորդվել սովորողի կամ լսարանի լեզվի իմացության մակարդակով, որովհետև ուժերից վեր հանձնարարությունները կարող են թևաթափ անել և հակառակ արդյունք ունենալ: Օգտակար է նաև հնարավորության դեպքում ունկնդրումն ու առաջադրանքների կատարման գործընթացը տեսաձայնագրել՝ հետահայաց քննարկումներ կազմակերպելու նպատակով:

Տնային աշխատանքի առաջադրանքները կարող են լինել թե՛ ամբողջական, թե՛ հատված առ հատված ունկնդրման վերաբերյալ: Ըստ գիտելիքների մակարդակի՝ աշակերտին կարելի է հանձնարարել ունկնդրել մեկից մինչև հինգ-տասը բոլոր տևող խոսք (Youtube-ից, Deutsche Welle-ից և այլ բազմաթիվ աղբյուրներից) և՛ ա) գրի առնել այն, բ) որոշակի տեղեկատվություն քաղել դրանից, գ) սեղմ վերարտադրել բովանդակությունը դասի ժամանակ, դ) տալ զարգացումների իր մեկնաբանությունները և այլն:

Տնային առաջադրանքների մեծ առավելությունն այն է, որ սովորողը կարող է սովյալ աշխատանքի համար իրեն հարմար ժամանակ տրամադրել և բազմիցս ունկնդրել հանձնարարված նյութը: Մյուս կողմից, նա կարող է տանը ինքնուրույն հետազոտություն կատարել՝ փորձելով բառարաններից բառիմաստների բացատրություն գտնել, ինտերնետից ծանոթանալ երևույթների պատմությանը, ելույթ ունեցող անձանց կենսագրություններին և այն: Ողջունելի վարժանք է հայելու առաջ ազատ դերախաղով կրկնօրինակումը: Տնային հանձնարարությունները անսահման ազատություն են տալիս ինքնուրույն ուսումնական գործընթացի իրականացման համար, որի արդյունքները թե՛ հուզական, թե՛ կոնկրետ ուսումնական առաջընթացի տեսակետից գրեթե միշտ դրական են:

## **Եզրակացություն**

ՀՀ հանրակրթական դպրոցներում միջմշակութային կոմպետենցիաների զարգացումը գերմաներենի դասերին բխում է նշված առարկայի ծրագրի կարևոր խնդիրներից ու նպատակներից: Ցանկացած օտար լեզու սովորելու համար աշակերտին ահրաժեշտ է ոչ միայն բառապաշար ու լեզվական այլ գիտելիքներ, այլև մտածողության ձևավորումը, միջմշակութային ունակությունների զարգացում, քանի որ այս դեպքում սովորողը գործ ունի այլ լեզվամշակույթի հետ: Լեզուն սովորելու համար անհրաժեշտ է կապող օղակ ստեղծել մայրենի լեզվի և գերմաներենի միջև: Աշակերտին պետք է գաղափար տալ տարբեր մշակույթների վերաբերյալ: Կարևոր դերակատարում ունեն նաև ժամանակակից մեթոդներն ու տեխնոլոգիաները, որոնք ուսուցչին կարող են օգնել միջմշակութային հաղորդակցական ունակություններ ձևավորել և զարգացնել սովորողների շրջանում: Գերմաներենի դասերին



կարևորվում են հատկապես տեսքստերի ունկդրման առնչվող տարաբնույթ առաջադրանքներն ու վարժությունները, որոնք ոչ միայն նպաստում են միջմշակութային հաղորդակցությանը, այլև բառապաշարի համալրմանը:

### **Օգտագործված գրականության ցանկ**

1. Աստվածատրյան Մ. և ուրիշներ, Ուսուցիչների վերապատրաստման գործընթացի կատարելագործումը, Եր., 2003:
2. Պետրոսյան Հ. Հ., Կոմպետենտային մոտեցումը և մասնագիտական կրթության որակի ապահովումը, Եր., 2013:
3. Т. Грушевицкая, В. Попков, А. Сааохин, Основы межкультурной коммуникации: учебник для вузов, М., 2002
4. Сепир Э., Коммуникация//Избранные труды по языкознанию и культурологии. М., Прогресс, 1993
5. Тер-Минасова, С. М. Язык и межкультурная коммуникация:(учебное пособие). Слово, 2008